

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԹԻՒՆ

Ընթերցասիրութիւնը իբրեւ կենսական պահանջ. — Ներքին Տեսչութիւն. Մամուլ. Վրաց թատրոն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձիւնական գործերը. Արտաքին լուրեր. — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — Հեռագրի մասին. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական նամակներ.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԻ ԻՐԵՆԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՆՈՒՆԸ

Այն օրից, որ մենք հրատարակեցինք «Մշակի» 1901 թվի բաժանորդագրութեան հրաւերը, սկսել ենք ստանալ զանազան տեղերից խնդիրներ՝ գիշերել «Մշակի» օրինակները ձրիաբար այս կամ այն գիւղական համայնքին, հասարակական հիմնարկութիւններին, դպրոցին եւ նոյն իսկ մասնաւոր մարդկանց խմբերին: Այդպիսի խնդիրներ մենք ստացել ենք ամէն տարի եւ նրանց մի մասին կարողացել ենք բաւարարութիւն տալ մեր միջոցներով եւ մասամբ այն նուիրատուութիւններով, որոնք մտել են մեր խմբագրութեան մէջ յատկապէս այդ նպատակի համար գործադրելու:

Մենք լաւ հասկանում ենք, որ կան դէպքեր, երբ նոյն իսկ մի լրագիր ստանալու համար մարդիկ դժուարանում են գտնել անհրաժեշտ միջոցներ, մենք լաւ գիտենք, որ շատ տեղ լրագրի ընթերցանութիւնը դեռ պէտք է պատուաստվի կողմնակի աջակցութեամբ: Սակայն ցաւայի է, որ լրագրի ընթերցանութիւնը դեռ չէ կարողացել այնպիսի մի պահանջ դրանք, որ նա, կենսական միւս անկեղծագործի եւ անհրաժեշտ կարիքների նման, կարող լինի բաւարարութիւն ստանալ ընդհանր եղանակով, այնպէս, ինչպէս զգացվում են միւս կարիքները:

Շատերը սիրում են կարգաւ, բայց ընթերցանութեան վրա դեռ նայում են իբրեւ շուկայական վրա, իբրեւ մի այնպիսի պահանջի վրա, որ կարելի է անտես անել, երբ առաջ է եկել որ եւ ուրիշը կենքի մէջ: Իսկ քանի որ ընթերցանութիւնը չի զարգանալ եւ չի զգացվի իբրեւ անխուսափելի եւ անբացասելի մի պահանջ,

անկարելի է համարել թէ մեր մամուլի եւ թէ նրա ընդարձակ զարգացման գործը ապահովված:

«Մշակ» լրագիրը, որ երեք տարի սերունից առաջ հրատարակվում էր շաբաթը երեք անգամ, վերջին երեք տարիները հրատարակվում էր հինգ անգամ, իսկ առաջին 1901 թվականին պէտք է լոյս տեսնի շաբաթը վեց անգամ: Լրագրի ծախքերը անկասկած աւելացան եւ այսուհետեւ աւելի եւս պէտք է աւելանան: Հասկանալի է, որ լրագիրը իր ապագայ ընդարձակ զարգացման համար պէտք է կարողանայ օրէցօր աւելացնել իր ծախսերը եւ ուրիշ նրանց համեմատ ունենալ աւելի մեծ եկամուտներ: Եթէ մեր հասարակութիւնը ցանկանում է, որ ամենօրեայ զարգացում «Մշակը» կարող լինի ապահով առաջ գնալ եւ ապագայում աւելի եւս զարգացնել իր գործունէութիւնը, նա պէտք է իր կողմից աւելի պարտաճանաչ լինի եւ նպաստի իր կողմից, որ ազգայնականութիւնը ընտելանալ կարգաւ լրագիրը եւ նայելու նրա վրա արած ծախքերի վրա, իբրեւ անհրաժեշտ կենսական մի ծախքի վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Երէկ մենք ասում էինք, որ մեր ժողովրդական կենսական մէջ չը կայ մի տխուր երեւոյթ, որի առաջ մենք չը զգայինք, թէ կայ հիւանդութիւն, բայց չը կայ բժիշկ: Ահա մի նոր օրինակ: Երկու տարի է ահա, Թիֆլիսում բացվել են հանրակրթական կուրսեր. մենք ժամանակին ողջունեցինք այդ գեղեցիկ հիմնարկութիւնը, որի նպատակն է դասախօսութիւնների միջոցով կրթութիւն տարածել ազգայնականութեան այն մասի մէջ, որը չէ ստացել պատշաճ ուսում զարդանքներով: Սկզբում, ինչպէս պատմում է «Тифлис. лист» լրագիրը, գործը շատ լաւ էր գնում եւ դասախօսութիւններ լսողների թիւը հասնում էր 293-ի. բայց այդ թիւը առաջին կիսամյակում իջաւ 202-ի, ապա 150-ի եւ վերջապէս չորրորդ կիսամյակում արդէն միայն 60 լսողներ կային: Ի՞նչ է պատճառը:

Կուրսերի անաղովութեան ճշմարիտ պատ-

ճառը, մեր խորին համոզմունքով, այն է, որ նրանք վատ են կազմակերպված, բայց մասնաւոր այն, որ մեր հասարակութեան մէջ պակասում են «մարդիկ», որոնք ընդունակ լինէին աշխատել յանուն գաղափարի, գործի համար, մարդիկ, որոնք ընդունակ լինէին գործի մէջ մտնել «կենդանի» հոգի, հեռացնելով վարձատրութեան ամեն մի հարց: Դասախօսների մեծամասնութիւնը կուրսերին նուիրում է շաբաթական ոչ աւելի քան երկու ժամ: Եթէ այդ ժամանակը դնանք ամենք այնպէս, ինչպէս վարձատրվում է միջնակարգ դպրոցներում, կը ստանանք 120—150 ռուբլի: Արժէ խօսել մի այդպիսի վարձատրութեան մասին եւ կարծել տալ, թէ մեզ միայն գնել կարելի է մի գործ կատարելու համար: Դասախօսների մէջ մեզ հետ խօսակցելիս ասաց անկեղծաբար, թէ այն մարդկանց մեծամասնութիւնը, որոնք հրաժարվում են կուրսերում դասախօսելուց, պատճառ բերելով, թէ շատ են ծանրաբեռնված դասերով եւ ուրիշ գործերով, շաբաթական կորցնում է ոչ թէ երկու եւ երեք ժամ, այլ ամբողջ տասնեակ ժամեր, նուիրելով այդ ժամերը թղթախաղի եւ այլ զուարճութիւններին:

Եւ այսպէս, ուր որ երես էք դարձնում—միշտ մի եւ նոյնը: «Մարդկանք» բացակայութիւն—ահա այդ սարսափելի պատճառը, որ կլանում, ոչնչացնում է մեր բոլոր հասարակական, մտաւոր գործերը:

ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 9-ին, վրաց ազնւականների թատրոնում կայացաւ վրաց խմբի առաջին ընկերակցութիւնը: Ս. Սիլվա-ձեռնի: Խմբի խաղաց երկու պիէս՝ «Երկու հերոս», պատմական դրամա Վ. Գուրիայի (ըստ Ֆ. Կոպլեյի) եւ «Հօբելըօր ընակարանը», ֆարս, թատրամոնթիւն Գուրիայի եւ Սախոկիայի: Ներքին պատմական ժամանակ, երբ գոյութիւն են ունեցել Ձինգիսխան եւ Շահ-Աբաս, որոնց արշաւանքներին ոչ մի երկիր, ոչ մի պետութիւն չէ դիմացել, բոլորը տալիս ու վրա է եղել: Մեր ժամանակները բոլոր արգելքի մէջ կան զրաւակ Ձինգիսխաններ. սրանց ձեռքն ինչ որ ընկաւ, լինի նա՝ պղծմա, վէպ, դրամա—պէտք է տալիս ու վրա լինի. եւ վայ այն հեղինակին, որ ընկաւ այս վերանորոգչների ձեռքը: Վրաց թատրոնական զրաւակութեան մէջ էլ կայ այսպիսի մի վերանորոգիչ—դա է պ. Գուրիա: Հէնց որ ընկաւ սրա ձեռքը մի

պիէս, նրանից կը ձեւի ինչ ուղղւած էք եւ կը մղաք իր յատուկ կրօնով եւ իր անուններով: Այս անգամ խեղճ Ֆրանսուա Կոպլեյն իր «Թագի համար» պիէսով ընկաւ Գուրիայի աւագանը եւ մկրտեց «Երկու հերոս» անունով:

Աֆիշայի վրա գրված էր՝ «Երկու հերոս», պատմական դրամա 3 գործ. Վ. Գուրիայի (ըստ Ֆ. Կոպլեյի). հիմա անանք թէ ինչն է Գուրիային եւ ինչը Կոպլեյին: Կոպլեյի դրաման 5 գործողութեամբ է եւ կատարվում է Ռալկանան լեռներում XV դարի վերջում. պ. Գուրիան դէն է գցել Կոպլեյի դրամայի առաջին գործողութիւնը լիովին եւ իր դրաման սկսել է երկրորդ գործողութիւնից. այսուհետեւ Կոպլեյի չորրորդ գործողութեան կցել է հինգերորդը վերջը եւ դուրս է բերել 3 գործ. դրամա: Գործողութիւնն էլ անց է կացրել Գուրիա—Մամիա Գուրիէլի ժամանակ XVII դարը: Պիէսի անունները, ի հարկէ, փոխված են, մի քանի դերեր դուրս գցված, մի քանի տեղ էլ կրճատված. դրամայի հանգուցը, լուծումը, դիալոգները, մօտօրոգները մնում են բառ առ բառ նոյնութեամբ Կոպլեյին, միայն տեղ տեղ կրճատվել են եւ փոխադրվել ըստ տեղի պահանջման:

Ուրեմն ինչ է պատկանում Գուրիային: Աւելի լաւ կը լինէր ասել դրամա Կոպլեյի, կրճատված Գուրիայից: Կանցնի ժամանակ, կոչնչանալ ըստ Ֆ. Կոպլեյի՝ փակագիրներով եւ կը մնայ «Երկու հերոս» Գուրիայի, ինչպէս անուն են Սարգուի «La Patrie»-ի հետ Ֆրանսուա Կոպլեյի դրաման մեծ աղողութեամբ խաղացվում էր «Օդէոն» թատրոնում, այսուհից անցաւ Լոնդոն, խաղացվեց «Lyceum»-ի մէջ, յետոյ անցաւ ռուսաց բեմը, այստեղից Բազուի հայաց բեմը (որի մասին շատ է գրվել «Մշակի» մէջ եւ այդ պատճառով էլ բովանդակութիւնը չենք բերում) եւ վերջը վրաց բեմի վրա մկրտվեց, որի կնքանայրը եղաւ Գուրիան եւ որը շնորհակալութեամբ կարճատևալ Կոպլեյի կողմից: Այսպէս հեշտ կերպով կարելի է ուրիշի ձեռքով փուշ քաղել, պսակ հիւսել եւ դնել ճակատին:

Պ. Գուրիան նուազով աշխատողներից մէկն է վրաց թատրոնական գործունէութեան մէջ, բայց չը պէտք է խախտել դրական էթիկան: Ժողովուրդը, որ շատ քիչ էր հաւաքվել թատրոնում, շատ էր ծափահարում եւ բեմ էր կանչում Գուրիային իբրեւ հեղինակի (?):

Դրամայի վերջը խաղացին ֆարսը, որը կուշտ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱԽԱԿՆԵՐ

„Alles war gesagt, doch
„Alles bleibt zu sagen.“
G ö t t e

Արքունական մատենաներում իւրիշը, արօտանդին, գրվում է օղաբաշու անունով: Այսպէս, օրինակ, Կլարա-Բուլլա—գծածորի Լազար Բաղդասար, տառն եւ երկու հարեւաններով, Կանի-սպի Ալեքսանդր աղա Շաքազադեան, ուրիշ հարեւաններով եւ այնու Այդարաների, իւրիշ ստանունները, պէտք է նկատել, վերին աստիճանի անորոշ են, թէ եւ հողաշափութիւնը այդ տեղերում կզել է եւ վաղուց վերջացել: Սահմանների այդ անճշգրտութիւնը մի կողմից, միւս կողմից անգլա-կան արքունական կալուածների վարչութիւնների շատ անգամ անուշադիր գործունէութիւնը, մեր լեռներում այնպիսի մի դրուլիւն են ստեղծում, որ վերջին խօսքը ուժեղին է: Երբ այս կամ այն լեռնաշղթայի արտաների տաճարութիւնը օրոշված է, երբ երկրաչափը այդ տեղ կատարել է իր գործը, եւ դուք, ձեռք բերելով ձեզ տուած արօտանդի բոլոր գօղումները, կարող էք, ըստ երեւոյթի, ամենապարզ կերպով օգտվել մի որ եւ օգտագործելով, դուք հանգիստ եւ այնպիսի արգելք-

ներին, ուր ձեր թղթի վրա ճանաչված իրաւունքները ոչ մի գին չունեն: Եթէ դուք, որ եւ է պատճառով, ուշանում էք մի երկու օրով, ձեր իւրիշ արդէն ուրիշի կողմից տիրապետած էք գտնում. այնուհետեւ դուք երկու ճանապարհ ունեք ձեր խախտված իրաւունքները վերականգնելու համար—կամ պէտք է դիմէք տեղական վարչութեանը, ներկայացնէք ձեր գօղումները, կանցնեն ամիսներ եւ ոչ թէ շաբաթներ, գուցէ գայ պետական կալուածների վարչութեան աստիճանաւորը եւ երկար ջնջութիւնից յետոյ կը յանձնէ ձեզ այն տարածութիւնը, որը մի քանի օրից յետոյ դուք պէտք է թողնէք, միւս գարնանը նորից վիճելու ձեր անվիճելի իրաւունքների համար...

Վէճի միւս ելքը ձեզ համար ձեր ոյժն է, որին եւ դիմում էք գրեթէ միշտ: Այսպէս, օրինակ, յայտնի է, որ 70—80% բոլոր քրէական գործերի, որոնք տեղի են ունենում մարտի մինչեւ սեպտեմբեր ամիսը մեր ելլալներում, առաջ են գալիս հողային վէճերից. բայց այն, որ վարչական մատենաներում դուք չէք կարողանում շատ անգամ ձեռք բերել ձեր իւրիշ ճիշդ սահմանները, պակաս չեն եւ այնպիսի աններկի սխալներ, երբ կալուածական վարչութիւնը մի եւ նոյն արօտը տալիս է ձեզ եւ ինձ: Մեզանք ոչ մէկը, ի հարկէ, չէ ուղղում գիշեր. դիմում ենք վարչութեանը, իսկ մինչեւ վերջինիս կարգադրութիւնը, դաշտը կատարում է իր գործը եւ ահա ձեզ մի քրէական գործ, ուր քաղաքացիական սխալը այնպէս մեծ տեղ է գրաւում:

Վերին աստիճանի հետաքրքիր է, որ մի եւ նոյն վէճերը կրկնվում են ամեն տարի, ամեն տարի նոր արիւն, նոր գործեր եւ տոնական թշնամութիւն, որը, որպէս մի նուիրական ժառանգութիւն, անցնում է սերունդների երկար շարք, որպէս դարձեալ մի ապացոյց օրինականութեան համեմատական թղթ զարգացման մեր մէջ:

Մեր նամակներում ժողովրդական կենսական այլ եւ այլ խնդիրներ արծարծելով, մենք առիթ ենք ունեցել ասելու, կարծեմ, որ մեր երկրը դեռ տակաւին քաղաքական աշխարհ է: Փաղարկելու շատ յարգված է մեր լեռներում, մի որ եւ արկածախնդիր միշտ կենտրոնացնում է իր շուրջը ընդհանուր ուշադրութիւն եւ արեւը, որպէս էմբլեմա այդ նուիրական քաղաքականութեան, շատ առօրեայ, շատ սովորական բան է մեր հասկացողութիւնների եւ մեր ճաշակի համար: Տարիները ընթացնում ուշադրութեամբ ուսումնասիրելով մեր ժողովրդական կենսական ընդհանրապէս եւ մեր քոչը մասնաւորապէս, մենք եկել ենք այն եզրակացութեան, որ մեր եայլալ գնալու սովորութիւնը միայն անտեսօրէն չը պէտք է բացատրվի: Խաչարածութիւնը, ձիւտ է, մեծ տեղ է գրաւում մեր անտեսութեան մէջ, գնում, այնու ամենայնիւ, մենք եայլալ ենք գտնում ոչ թէ միայն մեր հօտերը արածացնելու համար, այլ այդ անում ենք եւ մեր հակումներին, մեր անձնական պահանջներին բաւականութիւն տալու համար: Մենք դիմել ենք քոչը մեր երկրի անաղիւն տարածութեան վրա եւ չէինք կարող

ուշադրութեան չառնել, որ շատ շատերը գալիս են սարը գրեթէ ոչ մի անտեսութիւն չունենալով. նրանք գնում են այնտեղ, որովհետեւ ընտելացել են այդ կենսական, այդպէս են արել նրանց հայրերը, նրանց պապը, այդ պահանջում է նրանց աշխարհայեցողութիւնը, նրանց սովորութիւնները, նրանց ճաշակը:

Դուք գիտէք, ի հարկէ, որ ձմեռը մեր գաւառներում կենսական գրեթէ մարում է: Դուրսը ցուրտ եւ մռայլ, օդաներում մի ընդհանուր թմրութիւն, կենսաբան, այսպէս ասած, թմրած դրուլեան մէջ է եւ այդ բոլորի հետ շատ ներդաշնակ մեր հինաւուրց ճրագը, որ մերթ վառվելով, մարելով է մի ապա նորից աղօտ լուսաւորելով, այնպէս տեսական ընդունում է մեր նիստ ու կացը, մեր դրուլիւնը, մեր կենսաբան խաչ գալիս է դարձնել, օդան դատարկվում է, սալերի եւ գրասանների անվերջ շարքեր ձգվում են դէպի լեռները եւ այնտեղ սկսվում է մեր իսկական կենսաբան, այնտեղ մենք տեսնում ենք ձեզ հետ մեր հին հաշիւները, այնտեղ ծլում են մեր սիրային յարաբերութիւնները, այնտեղ կրթվում են մեր հակումները դէպի գեղեցիկը, դէպի սրտոտը, քաջը, որ մի գաղափար, մի հասկացողութիւն է կազմում մեզ համար:

Շատ հաշալի են մեր սարերում լուսնեակ գիշերները: Կախարդիչ, անուրի ձորերի միջով, աղմկալից գետերի շուրջը եւ քեջան աղբիւրների մօտ շարվում են մէկը միւսի յետեւից անթիւ վրաներ. այնտեղ լավում է սրինգի աստուածային մեղօղիան, որ այնպէս տրամադ-

ծիծաղ պատճառեց հասարակութեանը՝ ներկա-
յացումը վերջացաւ գիշերվայ ժամի 1-ին:

T.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբերի 7-ին

Վերին աստիճանի ծանր տպաւորութիւն է
գործում այն հանգամանքը, որ եթէ մեզանից
մէկի ոտը սայթաքում է եւ նա վայր է ընկի-
նում, իսկոյն ամեն կողմից վրա են հասնում
նրա գլխին թէ մեծ, թէ փոքր, թէ ախարհա-
կան եւ թէ—աւելի, հոգեւորական եւ բոլոր-
քում նրան ու ոտքի տակ տրորում, մոռանա-
լով Յիսուսի խօսքը, թէ ի՞նչ արդարեւ է ձեզա-
նից, թող նա առաջինը քարկոծէ դրան:

Հոգեբանապէս եթէ քննենք այս, մեր հա-
սարակութեանը յատուկ բնագիծը, պէտք է
ենթադրենք երկուսից մէկը՝ կամ մենք շատ
մաքուր եւ անարատ բարոյականի տէր ենք եւ
արդար ցատումն է եւ զայիւր մեր արտերի մէջ
եւ դուրս ժայթքում եւ կամ բոլորս էլ մի
խմորից ենք չինված եւ մեր մէջ խօսում
են վատթար կրքերը՝ ասիական վրիժառու-
թիւն, կոպտահոգութիւն եւ այլ գազանային
խնամականներ:

Պէտք է խոստովանել, որ բարոյական բարձր
յատկութիւնները ոչ մեր մասնաւոր կեանքում
եւ ոչ մասնաւոր հասարակական կեանքում
այնքան էլ յաճախակի աչքի չեն ընկնում, եթէ
աւելին չասենք... Մնում է մեզ դիմել երկ-
րորդ ենթադրութեանը, որն ամենքը կը խոս-
տովանեն, այն է թէ՛ վարքերի կոպտութիւնը,
մերձաւորի անբարոյական վրա ուրախանալը
—բաւականին ընդհանրացած են մեր մէջ:

Նոր օրինակ հանդիսանում է, պ. Կարապետ
Ջալալեանի երէցփոխութեան միջոցին, Բա-
յանից եկեղեցու գումարների պակասելը, որ
առիթ է տուել այդ վրիժառութեան նոյն եկե-
ղեցու միաբան Սեդուկի քանանայ Տէր-Պետ-
րոսեանցին (ՎՄԿ, № 208): Ես, ի հարկէ,
չեմ ուզում այս տողերով հերքել, թէ գոյու-
թիւն չունի պակասորդ Բաժնեկցի եկեղեցու
գումարների մէջ: Այդ իրողութեան մասին դը-
րել են ՎՄԿ-ի մէջ պ. Յարութեան եւ Վրժին,
որոնք չօչափել են գործի փաստային կողմերը
եւ արանց գրուածքների մասին եւ ոչինչ չու-
նեմ ասելու: Բայց այլ է Տէր-Պետրոսեան քա-
նանայի վերաբերմունքը դէպի ներկայ գործը:
Եւ իմ խօսքը հէնց այդ քանանայի մասին է:

Պ. Կարապետ Ջալալեանը բաւական ժամա-
նակ ծառայել է իբրեւ հոգաբարձու Երեւանի
թանկական դպրոցի եւ այնուհետեւ բաւական
տարիներ—տեսուէ Ալեքսանդրապոլի Արդու-
թեան ուսումնարանում, բայց իր կեանքում չէ
եղել այնքան բարդ գործերի եւ հաշիւների
մէջ, որպիսին ներկայացնում է Բաժնեկցի ե-
կեղեցու կառավարութիւնը 1895—1899 թվա-
րից մէջ եւ ահա յանկուծ ընտրվում է ե-
կեղեցու ծխականներից— երէցփոխ Բոլոր-
վում է չորս ու կէս տարին, պ. Ջալալեանը
իր հինգ թէ քանի գիրքը յանձնում է ծխա-
կաններից ընտրված հաշիւապահներին եւ սը-
րանք, հաշիւները քթորելուց յետոյ, գրու-
նում են այստեղ պակաս, այնտեղ պակաս, եւ
վերջապէս մի տեղ էլ անյայտ թողնված 4—5
հազար ռուբլու եւ դուժար, Գրքերը, ի հարկէ,
պահված են նահապետական ձեւերով: Պա-
կասում է 8,500 ռ., թէեւ Ջալալեանը այսօր
սկսում է մտաբերել, թէ 125 ռուբլի վճարել է
այս ինչ օֆիցէրին, որի կնոջ ոտը վնասվել էր
նկուղների մայթի վրա ունեցած լուսամուտը
կոտրվելուց, 100 ռ. փոխարինարար տուել է նոյն
Յովսէփ քանանայ Տէր-Պետրոսեանցին, բայց

առ, չը նայելով յոգնակի պահանջներին, չէ յետ
դարձրել իր պարտքը եւ դեռ կոպիտ պատաս-
խանքներ էլ տուել է... եւ այլ այսպիսի յիշողու-
թիւններ: Սակայն գիցուեք թէ հէնց հիշէ 8504
ր. 23 կօպէկ է պակասում:

Դուժարք՝ եթէ պակասել է, երկու ճանա-
պարհ կայ հարցը վճարելու. մէկը տնային, հաշտ
ճանապարհով—ծխականների ձեռքով, երբ ծը-
խականները կամ իրանք կը տեղեկանան բոլոր
եղելութիւններին, կամ իրանց միջից կընտրեն
իրաւարաններ, կամ դրանց հետ խառն եւ
ոչ-իրաւարաններ ու կը յանձնեն նրանց քննել
գործի գրութիւնը եւ իրանց եզրակացութիւնը
առաջարկել ծխականներին եւ գործը վերջ կը
ստանայ հոգեւոր ատենանում. միւս ճանապար-
հը դատաստանեալ ճանապարհն է, որով պ.
Ջալալեանը կը յանձնվի պետական դատաստա-
նին: Բայց թէ առաջին եւ թէ երկրորդ ճանա-
պարհով, մինչեւ որ խնդիր վերջնական վճիռ
չը ստանայ, ոչ քիչ չունի բարոյական իրաւունք
ձեռք բարձրացնել դատողի վրա: Ահա տար-
րական քաղաքակրթութեան այս կողմն է, որ
խաղաղ մոռացվում է Յովսէփ քանանայից: Ցա-
ւալի է այդ, այո՛:

Ինքը դատողը գրեց լրագրում, թէ նա եւ
ոչ մի կօպէկ չէ իւր պարտքը եւ դեռ ոչ
ոչ չէ ապացուցել թէ նա մի կօպէկ իւ-
ր պարտքն է, թէեւ, այո, գումարի պակասու-
թիւն կայ. բայց Յովսէփ քանանայ Տէր-Պետ-
րոսեանց սկսեց մի անխիղճ, եթէ չասեմ վա-
ղած մի քարկոծում, որ արդէն անվայել է
քանանայի պաշտօնական կոչմանը, որը
պէտք է ընտրող լինի հեղութեան, պիտի եւ
միաբանութեան եւ ոչ վրիժառութեան, այն էլ
անապահի ու անարդար վրիժառութեան: Եւ
եւ ինչ հետ շատերը գիտեմ, որ Յովսէփ քա-
նանայ Ջալալեանից հետ թշնամացած է
տարիներից ի վեր. տարրական քաղաքակրթու-
թիւնը եւ արդեւութիւնը, եթէ ոչ քանանայի
սուրբ կոչումը, պահանջում են, որ նա ձեռն-
պահ մնար Ջալալեանից քարկոծման գէթ վա-
ղած մի գործում:

Բայց ես կասեմ, որ ճանաչում եմ պ. Կա-
րապետ Ջալալեանին 1872 թվից եւ ճանա-
չում եմ խիստ մօտ կերպով. նա եղել է միշտ
եւ ամեն դէպքում ամենաազնիւ անձնաւորու-
թիւն եւ մինչեւ հոգու խորքը տողորված հա-
սարակական բարի գգացմունքով—այդ կը
խոստովանեն նրանք ամենքը, որոնք երկար
տարիներով եղել են նրան գործակից—պաշտօ-
նակից. հէնց այդ բաւական էր, որ եթէ նրա
ոտը մի անգամ սայթաքելից, մենք անխնայ
ոտքի տակ չէ տրորէինք նրան եւ չը խոցո-
տէինք նրա—այսօր դժբաղդ ընտանիքի սիրտը,
այլ սպասէինք անաչառ քննութեան վախճանին:

Բայց լսեցէ՛ք:

Ես տեսեմ եմ, որ պ. Կարապետ Ջալալեանը
միանգամայն անմեղ է այս դրամի պակա-
սորդի մէջ, այո, միանշանակ անմեղ. այդ իմ
անգաւանդի համոզմունքն է, թէ իրող ինչ քար-
կոծին նրա տեղը եւ այդ բաւական չէ, որ ես
եւ համոզված նրա անմեղութեան մէջ՝ ես
յոյս ունեմ, եթէ կազմվի իրաւարանների մի
յանձնաժողով կամ եթէ գործը յանձնվի պետա-
կան դատաստանին, որ նրա առաջ էլ եւ կը
հաստատուի պ. Կարապետ Ջալալեանի իսպառ-
անմեղութիւնը:

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են ուսու-
լրագիրները, հիմնվել են առողջապահական

կուրսեր կանանց համար: Կուրսերի բացումը
տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին:

Կախէթի երկաթուղու շինութեան հարցը
վաղուց արդէն վերջնականապէս վճարված է.
գործը մինչեւ այժմ առկա էր մնացել միայն
նրա համար, որ շինութեան իրաւունքն ստա-
ցած անձներին մինչեւ այժմ չէր անդրվում կաղ-
մել գրամատերերից բաղկացած մի ընկերու-
թիւն եւ հաւաքել շինութեան անհրաժեշտ մի-
ջոցները: Այժմ, ինչպէս հաղորդում են Պե-
տերբուրգի լրագրիչները, ֆրանսիական դրա-
մատերից արդէն կազմվել է մի խումբ, որ
մօտ օրերում մայրիկ է պետական բանկը
350,000 ռուբլի: Ամբողջ դրամագումարը, որ
հարկաւոր կը գալ Աւստրալից մինչեւ Սակոբո
երկաթուղի շինելու համար, հաշված է 12 մի-
լիոն ռուբլի:

Արդարադատութեան մինիստրութեան մէջ
կազմված մի յանձնաժողով մշակել է օրէնքի
նախագիծ, որով ենթադրվում է արբեցողնե-
րին հարկադրաբար դեռնելով այնպիսի բուժա-
րաններում, որոնք կը հիմնվեն յատկապէս նը-
րանց համար: Ներկայումս մինիստրութիւնը
յանձնել է այդ օրինագիծը այն յանձնաժողով-
ին, որ կազմում է քրէական օրէնքների նոր
ժողովածու, նրա եզրակացութիւնը իմանալու
համար:

Օդեսայում, ինչպէս հաղորդում է «Օձ.
Հոս.» լրագիրը, կազմակերպվում է մի նոր ըն-
կերութիւն, որն ապահովագրիւմ է ծառայող-
ներին այն դէպքերից, երբ նրանք զրկվում են
սուրբ կոչումից, կանոնադրութեան ծրագրով, որ
այժմ մշակվում է, ենթադրվում է, ի միջի
այլոց, որ պաշտօնից զրկված եւ ընկերութեան
մէջ ապահովագրված ծառայողը ստանայ լիովին
իր ուժերը մինչեւ նոր պաշտօն գտնելը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Իրերի գրութիւնը Ձինաստանում, չը նայի-
լով պետութիւնների միահամուռ ջանքերին,
չարոնապետ է մնալ անմխիթարական: Օտար-
երկրեայ գործերի արշաւանքը դէպի Ձինաս-
տան մինչեւ այժմ միայն մի դրակին հետե-
ւանք ունեցում է Պեկինում պաշարված դեւ-
պանների ազատութիւնը. բայց դրա հետ միա-
պին արշաւանքը վերածեց Ձինաստանը այնպի-
սի խառնակ վիճակի, այնպիսի քաոս ստեղ-
ծեց այդ լայնատարած եւ բազմաբնակ երկ-
րի մէջ, որ եւրոպական դիւանագիտու-
թեան իմաստունները հեղեղանքներ անգամ այժմ
չուրած են մնացել եւ չը գիտեն, թէ
ինչ միջոցներով պէտք է կարգ ու կանոն հա-
տատել նրա մէջ: Այն ժամանակ, երբ մի կող-
մից Պեկինի օտարերկրեայ դեպքանքները երկար
ու բարակ խորհրդակցում են իրար հետ, ան-
վերջ հրահանգներ են խնդրում իրանց կառա-
վարութիւններից, մշակում են խաղաղութեան
բանակցութիւնների սկզբնական ծրագիրը, իսկ

են մեզանում, առհասարակ, երբ դուք նկա-
տում էք նրա հրացանը, կամ վրիթարի դա-
շոյնը, եւ դա չար հասկանալի է. մեր լեռնե-
րում, ուր ընդթիւնը նոյնքան հարկաւոր է,
որպէս եւ մեր հաւուժները, ուր պատուա-
խնդրութիւնը այնքան զգայուն է եւ մի եւ
նոյն ժամանակ այնքան տարօրինակ, դուք
պէտք է հաշտվել իրերի այդ գրութեան հետ
եւ չը նայելով զինավթափութեան բոլոր խիստ
օրէնքներին, դուք առաջինը կը խախտէք այդ
սկզբունքում մեր վայրենութիւնը քաղաքա-
հետեւելով այն բոլորին, ինչով ապրում եւ
զբաղվում են մեր լեռներում, այդ քաղաքա-
տիրութիւնները կը լսէք ոչխարի, արօտի մա-
սին: Այս ինչը այսքան կիճան ունի, այն ինչը
Զ-ի տուարը անցեալ դէպքը քնն, տարել են
եւ այն եւ այն: Եթէ այդ խնդիրներին կցե-
լու ինչեւ են կնոջը, որ անբաժան է մեզա-
կան ասպետական հասկացողութեան հետ,
դուք կը ստանաք անտեսական եւ բարոյական
այն խնդիրներին ցիլլը, որ տիրապետում է
մեր քոչվորի շրջանում:

Չարմանալի արագ անցում են լեռներում,
տրանսից վրան, այն նորութիւնները, որոնցով
արամաղիք է զբաղվել եւ հետաքրքրվել մեր
ամբողջ: Զինանշարի կողմնորում մի երկու ա-
ւազակ է յայտնվել, կողոպտել եւ սպանել է
այս ինչ ձորում եւ ահա մի երկու օրից յետոյ

միւս կողմից՝ չինական լրագրողները հեղեղում
են դեպքանական դիւանատներն իբր չինական
արքունիքից ստացված հրովարտականքով, խառ-
նակ ու անկանոն պատերազմը շարունակվում
է իր կարգով՝ աւերելով երկիրն ու աւելի
բարդելով դրութիւնը:

Պեկինի նահանգում այժմ կենտրոնացած են
մօտ 100,000 եւրոպական զինուորներ. բայց եւ
այնպէս, այդ նահանգում անգամ փոքր ի շա-
տէ խաղաղութիւն չէ տիրում. անդադար տե-
ղի են ունենում մանր ու խոշոր ընդհարում-
ներ օտարերկրեայ զորաբաժինների եւ Վեմ-
բուռնցների ու չինական կանոնաւոր զորքի
մէջ: Ապստամբական շարժումը, ընդհակառա-
կը, տարածվում է դէպի հարաւային նահանգ-
ները, դէպի Ենցեի հովիտը, ուր, ինչպէս հա-
ղորդում են վերջին տեղեկութիւնները, ար-
դէն կործանված են 90 եկեղեցիներ եւ կոտոր-
ված են տեղական քրիստոնեաների 1000 ըն-
տանիք:

Սակայն ամենից աւելի վնասեցուցիչ հան-
գամանքն այն է, որ Ձինաստանում չը կայ
այժմ կառավարութիւն, որ բաւականաչափ
հեղինակութիւն պահպանած լինէր նոյն իսկ
չինացիների աչքում եւ որի հետ կարողանա-
լին գործ ունենալ պետութիւնները եւ այս
կամ այլ կերպ վերջացնել իրանց հաշիւները:
Այսպիսի նահանգանքներում Պեկինի դեպքան-
ների մշակած խաղաղութեան բանակցութիւն-
ների ծրագիրը, ի հարկէ, չէ կարող մեծ նշա-
նակութիւն ունենալ:

Խիստ հետաքրքրական կարծիք է յայտնում
այս վերջին հարցի մասին Պարիզի չինական
դեսպանը, որի հետ խօսակցութիւն է ունեցել
«Matin» լրագրի աշխատակիցը: «Այդ բոլորը—
ասել է դեսպան Իւ-Կենգ—լոկ խօսքեր են
միայն: Բաւական չէ որոշել խաղաղութեան
պայմանագրի պէտք է իմանալ եւ այն, թէ
կամ առաջարկել այդ պայմանները, այն ինչ
դաշնակիցները այդ չը գիտեն, որովհետեւ նը-
րանց առաջ չը կայ ոչ մի պատասխանատու
իշխանութիւն: Ուղիղ է, նրանք գործ ունեն
Լի-Պունց-Չանգի եւ նրա ընկերների հետ,
բայց չէ որ դա լոկ դիւանագիտական կեղծիք
է: Կեղծ լրագրողներ ոչինչ չեն կարող անել
այն զարհուրելի անյայտութեան մէջ, որ ծա-
րանում է նրանց վրա. նրանք կարող են մի-
այն խորամանկութիւն անել, սուտ խօսել,
ժամանակ վատաւարել եւ, ըստ կարելոյն, ազա-
տել իրանց անձը: Եթէ նրանք յաճախեն, այն
ժամանակ անհարկաւոր կը լինի եւ կարող
են ենթարկվել պետութիւնների պատժին, իսկ
եթէ զիջումներ անեն, այդ դէպքում նը-
րանց շատ տխուր վախճան է սպասում, եթէ
կայսրուհին պահէ նոյն իսկ ամենափոքր իշ-
խանութիւն:

«Բայց ենթադրենք մի րօպէ, թէ երկար
ձգձգումներից յետոյ՝ չինական լրագրողները
ստորագրեցին խաղաղութեան պայմանները:
Դա կը լինի լոկ ձեւականութիւն եւ ոչ թէ
հարցի լուծում: Դաշնագրի յօդուածների մի
մասը չի կատարվի, որովհետեւ իրապէս նա
անիրագործելի է: Ձինաստանում նոյնքան
դժուարութեամբ կարելի է ոչնչացնել «Վեմ-
բուռն»-ը, որ եւ Ղափանում, Սիսիանում, կամ
Նաւարաւագի լեռներում դուք ամենամանրա-
նաւ տեղեկութիւններ կը լսէք այդ դիպուածի
մասին: Այդ բաւական չէ. ձեզ կասեմ, թէ
թաւանից որ աւազակին ինչ հասաւ, ուր եւ
որ ճանապարհով գնացին աւազակները, ում
տակին ինչ գոյնի ձի կար, որքան հրացանի
փամփուշտ ունէր նրանցից ամեն մէկը եւ
այն եւ այլն:

Երբ հոյակաւոր Նաւի ասպատակում էր
Արաքսի այս եւ այն կողմը, նրա կատարած
արկածների մասին ամենամանրամասն պատ-
մում էին միաժամանակ Մաքուի խառնութեան
մէջ (Պարսկաստան, Արաքսի այն կողմը), ամ-
բողջ ինչպէս էին միմեկին նահանգներում
թէ ինչպէս էին այդ նորութիւնները այնպէս
արագ անցնում լեռների հաւաքին տարածու-
թիւնը—երեւակայել անգամ դժուար է, բայց
դա փաստ է եւ շատ, ի հարկէ, բնորոշ, մեր
հայեացքների եւ մեր խնդիրների տեսա-
կէտից:

Բայց զայիս են աշան օրերը, կեանքի խն-
դիրները լեռներից տեղափոխվում են դէպի
«բարան», դէպի տափարակ տեղերը, անցնում
են անհոգութեան եւ զուարճութեան օրերը,
զայիս է «խարջի», ձմեռվան հոգած, վրանները
չբռնում են մէկը միւսի ետեւից, եւ սեպտեմ-
բերին քոչը ցրվում է հեռաւոր անկիւններ
ձմեռելու, որպէս զի զարնան հետ միասին
նորից հեղեղէ իր սիրած սարերը... * *

Типографія Грузинск. Т-ва, Большая-Ванская ул., № 27.